

Արձանագրություն թիվ 7

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

16 մարտի 2019թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության քննարկում:
2. 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակի ԵՊՀ ռեկտորատի կողմից ուսանողների շրջանում անցկացված դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ հարցման արդյունքների քննարկում:
3. Ընթացիկ հարցեր:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի Ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան նշված հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի կառուցվածքում գործող երկու „Կիրառական արվեստ” և „Դիզայն” մասնագիտությունների տարբեր տարիների դիմորդների շարժը հաշվի առնելով այս տարվա ավարտական աշակերտների ցանկությունները ու ֆակուլտետի կադրային ներուժը առաջարկեց վերաբացել և 2019թ.ընդունելիության մասնագիտությունների ցանկում ներառել<< Կիրառական արվեստ>> կրթական ծրագիրը` <<Դիզայն>> մասնագիտության հետ

գուգահեռ: Միաժամանակ նշվեց , ու որ դիմորդների ցանկության դեպքում ֆակուլտետի աշխատակիցները պատրաստակամություն են հայտնել օգտակար լինել ընդունելության քննությունների նախապատրաստվելու գործում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ամբիոնի վարիչ Հ.Ասատրյանը տեղեկացրեց ընթացիկ աշխատանքների վիճակի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ— 1.մինչև 2019թ. հունիսի 25-ը նախնական ամրագրել ուսումնական պլանով նախատեսված կրթական մոդուլները կոնկրետ դասավանդողներին 2.մինչև օգոստոսի 25-ը դասավանդողները ներկայացնեն վերոնշյալ կրթական մոդուլների առարկայական փաթեթները/ պորտֆոլյոները/:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ներկայացրեց 2018-2019թթ. ուստարվա առաջին կիսամյակի ուսանողների շրջանում ԵՊՀ ռեկտորատի կողմից „Դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման վերաբերյալ” անցկացված հարցումների ամփոփ արդյունքները: Ծավալվեց քննարկում և վեր հանվեցին այնպիսի մտահոգություններ և հարցադրումներ, ինչպիսին են .

ա. Ուսանողների կարծիքների ավելի սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերը

բ. Այն դասախոսները, որոնք քննական պրոցեսում գնահատելու ժամանակ օբյեկտիվ են եղել , նրանք ստացել են ավելի ցածր , իսկ նրանք ովքեր „ նվիրել” են գնահատականներ՝ ուսանողների կողմից գնահատվել են բավականին բարձր:

գ. Ուսանողները չէին ցանկանում որոշ դասախոսների մեկ այլ առարկայի դասավանդումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Գրեթե բոլոր դասավանդողները և նշեցին , որ հարցը քննարկվել է նաև ամբիոնների համատեղ նիստում, գնահատականները բարձրաձայնվել, վերլուծվել և կատարվել են համապատասխան հետևություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Հանձնարարել ամբիոնների վարիչներին ուսանողների կողմից մատնանշված թերությունները վերանայելու ուղղությամբ, տանել հետևողական աշխատանքներ և հնարավորության սահմաններում վերացնել նրանք:

2.Հաջորդ տարվա անհատական բեռնվածությունները կազմելիս հաշվի առնել նաև ուսանողների մեծամասնության կարծիքը:

Ընթացիկ հարցերի վերաբերյալ հանդես եկավ Ա.Շ.Մարգարյանը և նշեց , որ կարգապահական հարցերը եղել և մնում են կարևորագույն պահանջ ինչպես

ուսանողների , այնպես էլ աշխատակիցների համար: Նա ևս մեկ անգամ հիշեցրեց այն մասին, որ համաձայն ԵՊՀ ԻՄ կարգապահական կանոնակարգի ուսանողներին 40 ժամ անհարգելի բացակայության դեպքում գրավոր նկատողություն է հայտարարվում դեկանի կողմից , 80-ի դեպքում տնօրենի, իսկ 120 -ի դեպքում՝ հեռացվում է համալսարանից: Նշված սահմաններից գերազանցել են երկու ուսանողներ, որոնց հետ տարվել են բացատրական աշխատամքներ:

Աշխատակիցների վերաբերյալ նշվեց, որ որոշ դասախոսներ հաճախակի խախտում են աշխատանքային կարգապահությունը և ստանում բանավոր նախազգուշացումներ: Նման կերպ շարունակելու դեպքում նրանք կստանան գրավոր նկատողություն և կարժանան ավելի խիստ պատիժների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- մասնագիտության պատասխանատու Լ.Ֆլջյանը և նշեց , որ վերոնշյալ ուսանողների հետ ունեցել են անհատական զրույցներ, բացատրել և զգուշացրել են հետագա գործողությունների մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հետևողական լինել հաճախակի բացակայություններ ունեցող ուսանողների վարքագծին և նրանց հետ շարունակել բացատրական աշխատանքները:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք.Հ.ՄԻԻԹԱՐՅԱՆ